2/32.7/11518

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«14» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000087

Ձեռնարկողը՝ ***«Էյջ Բի գրուպ» ՍՊԸ***
քաղաք Երևան, Ավետիսյան 4փ. 10/26

Գործունեությունը՝ ***Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պարույր Սևակի 51/11 և Տոնյան 14 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000087

<14> 10 2020թ.

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պ. Սևակի 51/11 և Տոնյան փողոցի 14 հասցեներում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Էյջ Բի Գրուպ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Պարույր Սևակի փողոց 51/11 և Տոնյան փողոց 14 հասցեներում: Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ:

Տեղանքը հարթ է: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Հողամասի մակերեսը կազմում է 0.55923 հա, որից 0.3962 հա սեփականություն՝ (կադաստրային ծածկագիր՝01-012-0223-0022) և 0.0674հա ընդհանուր համատեղ սեփականություն (կադաստրային ծածկագիր՝01-012-0223-0023) + 0.09563հա սեփականություն (կադաստրային ծածկագիր՝01-012-0223-0198):

Նախատեսվող գործնեության համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի ա) ենթակետի այն հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն N01/18-25333 -17 քանդման թույլտվության նախատեսված է քանդել և ապամոնտաժել Ք. Երևան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Պարույր Սևակի փողոց 51/11 և Տոնյան փողոց 14 հասցեներում առկա քանդման ենթակա շինությունները:

Քանդված շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է 1016.4մ2, շին արդի ծավալը՝ 1254տն:

Քանդված շինություններն են՝

- պահակատուն՝ 25.1քմ,
- ինքնակամ շինություն՝ 1.7քմ,

- խանութ՝ 410.1քմ,
- ավտոտնակ՝ 192.2քմ,
- պահեստ՝ 387.3քմ:

Քանդման և ապամոնտաժման աշխատանքները պետք է կատարել ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի: Բոլոր տիպի քանդման և ապամոնտաժման աշխատանքները պետք է կատարել պահպանելով անվտանգության կանոնները:

Քանդման աշխատանքների ժամանակ հաշվի է առնված քանդումից առաջացած պիտանի նյութերի քանակը, այն տեղափոխելով պահեստային տարածքներ, որի համար կազմվում է համապատասխան ընդունման և հանձնման ակտ կապալառուի և պատվիրատուի միջև:

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Թույլ չտալ թունավոր արտանետումների նորմայից ավել քանակություններ դեպի մթնոլորտ, շինարարական մեքենաները շինարարական հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Շինաղբով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը բաղկացած է Ա, Բ և Գ մասնաշենքերից: Տրանսպորտային մոտեցումը դեպի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր, նախատեսվում է դրոյի փողոցից և հանդիսանում է որպես գլխավոր մուտք: Բնակելի համալիրը ունի նաև երկրորդ մուտք, որը իրականացվում է Պարույր Սևակ փողոցի կողմից, մուտքը չծանրաբեռնելու համար:

Բազմահարկ բնակելի համալիրը կազմված է երեք մասնաշենքերից, որի մեջտեղի մասնաշենքը ունի 16 վերգետնյա հարկ, իսկ եզրային երկու հատվածները 18 վերգետնյա հարկերից: Երեք մասնաշենքերը միմյանցից առանձնացված են հակասեյսմիկ կայաններով: Շինության 0.000 նիշը ընդունված է առաջին հարկի հատակի նիշը:

Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի միակողմանի են, թեքահարթակներով: Բացի ստորգետնյա ավտոկայանատեղից, կառուցվելու է նաև վերգետնյա 120 մեքենայի համար բազմահարկ մեխանիկական ավտոկայանատեղի: Ընդհանուր ավտոկայանատեղի քանակը կազմում է 300 ավտոմեքենա: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը ունի 273 բնակարան որոնք սպասարկվում են երեք մուտքերից: Յուրաքանչյուր մուտք ունի աստիճանավանդակ և երկու վերելակ 800 և 1275 կգ բեռնաբարձությամբ:

Վերելակների եվ աստիճանավանդակների նախասրահի դռները ինքնափակվող են, հերմետիկ և հակահրդեհային: Միջանցքները սարքավորված են ծխահեռացման համակարգով:

Բնակարաններում նախատեսվում են հրդեհի ազդանշման տվիչներ: Բնակելի համալիրի առաջին և երկրորդ հարկերի ճակատները երեսապատվում են սրբատաշ բազալտով, իսկ երրորդ հարկից դեպի վերջին հարկը նախատեսված է երեսապատել բարձր որակի բնական քարով և սվաղով: Հնարավոր է նաև երեսապատման այլ նյութերի կիրառում, որոնք չեն հակասում ՀՀ գործող շինարարական նորմերին: Արտաքին պատերի և միջնորմների իրականացման համար նախատեսվում է օգտագործել պեմզաբլոկ:
Տանիքը հարթ, համատեղված ճկուն փաթեթային ծածկույթով և կազմակերպված ջրահեռացումով: Հատակները նախատեսվում է կառուցել բոլոր միջհատակային հաղորդագծերը տեղադրելուց հետո:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման նախագիծ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:
Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից, СБ-69Б ավտոբետոնախառնիչներով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացնելու է համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին, արտաքին ցանցը մոնտաժվում է պոլիէթիլենային բարձր ճնշման խողովակներից:

Արտաքին հրդեհի մարման համար շենքի տարածքում նախատեսված է տեղադրել Փ125մմ հրդեհային հիդրանտ:

Տաք ջրամատակարարումը իրականացվում է բնակարաններում նախատեսված կաթսաներից: Ներքին ցանցը մոնտաժվում է պոլիպրոպիլենային խողովակներից:

Անձրևաջրի հոսքերը շենքի տանիքից հեռացվում են նախագծվող հեղեղատարի միջոցով և թափվում են Դավիթ Անհաղթ փողոցով անցնող Փ700մմ հեղեղատարի մեջ:

Արտաքին կոյուղագծերի ցանցերը անցկացվում են պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակներից SN-8 Փ200,300մմ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էլեկտրամատակարարումն կիրականացվի «ՀԵՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գազամատակարարումը կիրականացի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

Բնակելի համալիրի ջերմամատակարարման համար կաթսայատուն չի նախատեսվում, ջերմամատակարարումը իրականացվելու է անհատական:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ 1200-1300 կգ, և 2200տ շինարարական աղբը, որը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը,

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով,

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

-ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով,

- աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,

- պարբերաար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,

- թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար,

- շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից,

բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները,

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը, ինչպես նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները և քաղաքաշինության կոմիտեն:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանն ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի հետ համաձայնեցված:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը,
- նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված ժամանակացույցով՝ ըստ աշխատանքային օրերի և ժամերի:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ընթացքում պատմական, գիտական, գեղարվեստական, մշակութային արժեք ունեցող հնագիտական և այլ նմանատիպ օբյեկտների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էյջ Բի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պարույր Սևակի 51/11 և Տոնյան 14 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան